ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԱՐԳԱԴՐԱԳԻՐ № ՏՍՆ–15–2023

1. **Տեսչական ստուգման անցկացման վայրը՝** «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ ընկերություն):
2. **Տեսչական ստուգման անցկացման ամսաթիվը՝** 13.09.2023թ.:
3. **Տեսչական ստուգման տեսակը՝** պլանավորված, հայտարարված:
4. **Տեսչական ստուգման նպատակը՝**
   Ստուգել ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից ընկերությանը տրված գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման ՃԱՕ-186-2008 առ 26.08.2008թ. (վերաձևակերպված 27.08.2015թ.) լիցենզիայի պայմանների և պահանջների կատարումը:
5. **Տեսչական խմբի կազմը՝**
   - Էլիզաբեթ Ներսիսյան՝ կոմիտեի ճառագայթային անվտանգության վարչության ճառագայթային անվտանգության և պաշտպանության բաժնի պետ-պետական տեսուչ,
   - Արմեն Բաբայան՝ կոմիտեի ճառագայթային անվտանգության և պաշտպանության բաժնի ճառագայթային պաշտպանության գլխավոր պետական տեսուչ:

   Տեսչական ստուգմանը մասնակցել է «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր մասնագետ Եղիշե Գոնդակյանը ճառագայթային չափումների իրականացման մասով:
6. **Տեսչական ստուգման ընթացքում տեսչական խմբին ուղեկցած անձնակազմը՝**
   Հայկուշ Հովակիմյան՝ ընկերության բժիշկ-ռենտգենոլոգ, Նվեր Կիրակոսյան՝ ընկերության բժիշկ-ռենտգենոլոգ, Լուսինե Մարտիրոսյան՝ ախտորոշման բաժնի պետի պաշտոնակատար:
7. **Ընկերությունում ստուգման ենթակա իոնացնող ճառագայթման աղբյուրներ.**
   - SIEMENS «Luminos RF Classic» գործարանային համարը՝ 10470 (պետական գրանցման համարը՝ 0115301655041978) (օգտագործվում է),
   - SIEMENS «Siremobile 15 98 205 G5378» գործարանային համարը՝ 01167 S07 (պետական գրանցման համարը՝ 0115301655051940) (չի ներկայացվել),
   - Dental X-RAY «JYF-10B» գործարանային համարը՝ 0902017 (պետական գրանցման համարը՝ 0115301128041724) (չի օգտագործվում),
   - МОСРЕНТГЕН «Рентген-30» գործարանային համարը՝ 491 (պետական գրանցման համարը՝ 0115301128040857) (չի օգտագործվում, ապամոնտաժված է, դուրս է գրվել),
   - CHIRANA (Arman-1-8L38) «8L3D» գործարանային համարը՝ 633 (պետական գրանցման համարը՝ 0115301128050860) (չի ներկայացվել),
   - АКТЮБРЕНТГЕН «12Ф7» գործարանային համարը՝ 35 (պետական գրանցման համարը՝ 0115301128040858) (օգտագործվում է),
   - Nanjing Perlove Medical Equipment Co. Ltd. «PLX112B1» գործարանային համարը՝ 12B121190 (օգտագործումը լիցենզավորված չէ),
   - МОСРЕНТГЕН «РУМ-20» գործարանային համարը՝ 1/15 (պետական գրանցման համարը՝ 0115301128040859) (չի օգտագործվում, ապամոնտաժված է, դուրս է գրվել),
   - DRGEM գործարանային համարը՝ 2001044 (գրանցված չէ և օգտագործումը լիցենզավորված չէ),

- BMI գործարանային համարը՝ JPR13/1043 (գրանցված չէ և օգտագործումը լիցենզավորված չէ):

8. Ստուգման արդյունքները.

Տեսչական ստուգման ժամանակ հայտնաբերված խախտումները /անհամապատասխանությունները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Տեսչական ստուգման շրջանակներում «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են ռադիոմետրիկ չափումներ: Հաշվետվությունը կցվում է (հաշվետվություն № RT-A123-T3.2-017 առ 19.09.2023թ.):

Աղյուսակ 1: Տեսչական ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ժամկետները

N	Տեսչական ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումները	Իրավական հիմքերը, որոնց պահանջները չեն կատարվել	Հայտնաբերված խախտման վերացման նպատակով կարգադրվում է	Խախտման վերացման ժամկետը
1.	Ընկերության բժիշկ – ռենտգենաբան Նվեր Կիրակոսյանն ունի ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր աշխատանքներ կատարող և պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձի գործունեության լիցենզիա՝ տրված այլ վայրի համար: Ընկերությունում աշխատում է առանց տվյալ վայրի համար պարտադիր գործունեության լիցենզիայի:	Լիցենզավորման մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդված, մաս 1-ին և մաս 3-րդ:	Ապահովել Նվեր Կիրակոսյանի գործունեության լիցենզավորումը ընկերությունում՝ համաձայն Լիցենզավորման մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի:	11.10.2023թ.
2.	Ընկերության բժիշկ – ռենտգենաբան Հարություն Ալեքսանյանն ունի ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր աշխատանքներ կատարող և պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձի գործունեության լիցենզիա՝ տրված այլ վայրի համար: Ընկերությունում աշխատում է առանց տվյալ վայրի համար պարտադիր գործունեության լիցենզիայի:	Լիցենզավորման մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդված, մաս 1-ին և մաս 3-րդ:	Ապահովել Հարություն Ալեքսանյանի գործունեության լիցենզավորումը ընկերությունում՝ համաձայն Լիցենզավորման մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի:	11.10.2023թ.

3.	Ընկերությունում օգտագործվում է DRGEM գործարանային համարը՝ 2001044 ռենտգենախտորոշման սարք, որը գրանցված չէ կոմիտեի իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցամատյանում:	ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի «Իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցման կարգը հաստատելու մասին» №765 որոշում, բաժին I, կետ 6, ենթակետ դ):	Ապահովել DRGEM գործարանային համարը՝ 2001044 իոնացնող ճառագայթման աղբյուրի պետական գրանցումը՝ ՀՀ կառավարության 2001թ օգոստոսի 16-ի «Իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցման կարգը հաստատելու մասին» №765 որոշմանը համապատասխան:	03.11.2023թ.
4.	Ընկերությունում օգտագործվում է BMI գործարանային համարը՝ JPR13/1043 ռենտգենախտորոշման սարք, որը գրանցված չէ կոմիտեի իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցամատյանում:	ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի «Իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցման կարգը հաստատելու մասին» №765 որոշում, բաժին I, կետ 6, ենթակետ դ):	Ապահովել BMI գործարանային համարը՝ JPR13/1043 իոնացնող ճառագայթման աղբյուրի պետական գրանցումը՝ ՀՀ կառավարության 2001թ օգոստոսի 16-ի «Իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցման կարգը հաստատելու մասին» №765 որոշմանը համապատասխան:	03.11.2023թ.
5.	DRGEM գործարանային համարը՝ 2001044, BMI գործարանային համարը՝ JPR13/1043 և Nanjing Perlove Medical Equipment Co. Ltd. «PLX112B1» գործարանային համարը՝ 12B121190 իոնացնող ճառագայթման աղբյուրների օգտագործումը լիցենզավորված չէ:	Լիցենզավորման մասին ՀՀ օրենք, հոդված 43, մաս 2, կետ 13, ենթակետ 6:	Ապահովել DRGEM գործարանային համարը՝ 2001044, BMI գործարանային համարը՝ JPR13/1043 և Nanjing Perlove Medical Equipment Co. Ltd. «PLX112B1» գործարանային համարը՝ 12B121190 իոնացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման լիցենզավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ դեկտեմբերի 9-ի «Ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի կամ գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» №1751-Ն որոշման II-րդ բաժնի 5-րդ, 6-րդ կետերին համապատասխան: Խուսափել նշված իոնացնող ճառագայթման աղբյուրները օգտագործելուց՝ մինչև դրանց օգտագործման լիցենզավորումը:	20.11.2023թ.
6.	АКТЮБРЕНТГЕН «12Ф7» գործարանային համարը՝ 35 (պետական գրանցման համարը՝ 0115301128040858) ռենտգենախտորոշման	ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2006թ. №1219 որոշում/ NRWSC-RT-QRM-021/21-001:	Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնց արդյունքում պացիենտի կրծքավանդակի հետազոտության ժամանակ հաղորդված դոզայի չափը չի գերազանցի ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2006 թ. №1219 որոշմամբ սահմանված	20.11.2023թ.

	ճառագայթահարիչի պացիենտների ճառագայթային մոնիթորինգի արդյունքում չափված դոզայի արժեքը՝ կրծքավանդակի հետազոտության համար գերազանցել է ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2006թ. №1219 որոշմամբ պացիենտների համար սահմանված դոզայի արժեքը:		ճառագայթման դոզայի ուղղորդիչ մակարդակը: Ժամանակավորապես դադարեցնել АКТЮБРЕНТГЕН «12Ф7» սարքի շահագործումը, մինչև համապատասխան միջոցառումների իրականացումը:	
7.	Ճառագայթային անվտանգության վիճակի վերաբերյալ 2022թ. տարեկան հաշվետվությունը կոմիտե չի ներկայացվել:	ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի 12.10.2010թ. №317-Ն հրաման:	• Կոմիտե ներկայացնել ճառագայթային անվտանգության վիճակի վերաբերյալ 2022թ. հաշվետվությունը՝ ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի 12.10.2010թ. № 317-Ն հրամանին համապատասխան: • Ապահովել ամենամյա հաշվետվությունների ներկայացումը կոմիտե:	20.11.2023թ.
8.	Անձնակազմի ճառագայթահարման դոզաների քննման մակարդակը սահմանված չէ:	ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշում, բաժին XIII, կետ 168:	Կոմիտե ներկայացնել գեներացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատող անձնակազմի ճառագայթահարման դոզաների քննման մակարդակի սահմանման վերաբերյալ փաստաթուղթ՝ ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշման 168-րդ կետին համապատասխան:	20.10.2023թ.
9.	Անձնակազմի մասնագիտական ճառագայթահարման դոզաների գրանցամատյանը բացակայում է:	ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշում, բաժին XIII, կետ 165:	• Ապահովել անձնակազմի մասնագիտական ճառագայթահարման տարեկան համարժեք դոզաների գրանցումը և տվյալների պահպանումն առնվազն 50 տարի՝ ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշման 165-րդ կետին համապատասխան: • Կոմիտե ներկայացնել վերոնշյալ գրանցամատյանի թղթային տարբերակի պատճենը կամ համակարգչի	20.10.2023թ.

			միջոցով գրանցված համարժեք դոզաների արտահանված տվյալները:	
10.	Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման բաժանմունքներում պացիենտների ճառագայթահարման դոզաները չեն գրանցվում:	ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» №1489-Ն որոշում, կետ 198, 199:	Ապահովել պացիենտների ճառագայթահարման դոզաների գրանցումը՝ «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» №1489-Ն որոշման 198-րդ, 199-րդ կետերին համապատասխան:	20.10.2023թ.
11.	Ընկերության գեներացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանքներ իրականացնող վիրաբույժ-վնասվածքաբաններ Արթուր Այվազյանը և Գրիգորի Վանտյանը, բժիշկ-ռենտգենաբան Էլեն Ալոյանը, ռենտգեն-լաբորանտներ Անուշ Կիրակոսյանը, Նաիրա Վարդանյանը, Հրաչյա Գուլյանցը, Անի Միրզոյանն ընդգրկված չեն կատեգորիզացված անձնակազմի ցանկում:	ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» № 1219-Ն որոշում, բաժին II, կետ 13 և բաժին III, կետ 15:	Կոմիտե ներկայացնել կատեգորիզացված անձնակազմի վերանայված ցանկը, գեներացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանքներ իրականացնող վիրաբույժ-վնասվածքաբաններ Արթուր Այվազյանին և Գրիգորի Վանտյանին, բժիշկ-ռենտգենաբան Էլեն Ալոյանին, ռենտգեն-լաբորանտներ Անուշ Կիրակոսյանին, Նաիրա Վարդանյանին, Հրաչյա Գուլյանցին, Անի Միրզոյանին ներառելով կատեգորիզացված անձնակազմի ցանկում՝ ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» № 1219-Ն որոշման II-րդ բաժնի 13-րդ և III-րդ բաժնի 15-րդ կետերի համաձայն:	20.10.2023թ.
12.	Գեներացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանք իրականացնող Արթուր Այվազյանի, Գրիգորի Վանտյանի, Էլեն Ալոյանի, Անուշ Կիրակոսյանի, Նաիրա Վարդանյանի, Հրաչյա Գուլյանցի, Անի Միրզոյանի մասնագիտական ճառագայթահարման մոնիթորինգն ապահովված չէ:	ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշում, բաժին XIII, կետ 160:	• Ապահովել Արթուր Այվազյանի, Գրիգորի Վանտյանի, Էլեն Ալոյանի, Անուշ Կիրակոսյանի, Նաիրա Վարդանյանի, Հրաչյա Գուլյանցի, Անի Միրզոյանի մասնագիտական ճառագայթահարման մոնիթորինգի իրականացումը՝ համաձայն ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշման XIII-րդ բաժնի, 160-րդ կետի: • Կոմիտե ներկայացնել մոնիթորինգի իրականացումը հավաստող նյութեր:	20.12.2023թ.
13.	Ընկերության անձնակազմի ճառագայթային	ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային	• Սահմանել ընկերության անձնակազմի ճառագայթային անվտանգության նորմերի ու	20.10.2023թ.

	անվտանգության նորմերի ու կանոնների, աշխատանքային հրահանգների իմացության ստուգման կարգը չի ներկայացվել:	անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշում, բաժին XIV, կետ 172:	կանոնների, աշխատանքային հրահանգների իմացության ստուգման կարգն ու պարբերականությունը և այն ներկայացնել կոմիտե՝ համաձայն ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշման, XIV-րդ բաժնի, 172-րդ կետի: • Ապահովել անձնակազմի ուսուցումն ու հրահանգավորումը, ինչպես նաև պաշտոնական հրահանգով սահմանված ծավալով ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների, աշխատանքային հրահանգների իմացության ստուգումը և դրանց վերաբերյալ հավաստող փաստաթղթերը ներկայացնել կոմիտե՝ համաձայն ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» № 1489-Ն որոշման, XIV-րդ բաժնի, 172-րդ կետի:	
14.	Ռենտգենախտորոշման սարքերի տեղադրման սենքերի մուտքերի մոտ ճառագայթային վտանգի նշանները բացակայում են:	ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» №1489-Ն որոշում, կետ 31:	Կոմիտե ներկայացնել նշված խախտման վերացումը հավաստող հիմքեր՝ ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» №1489-Ն որոշման 31-րդ կետի համապատասխան:	20.10.2023թ.
15.	Ռենտգենախտորոշման սարքերի (բացառությամբ LUMINOS RF-ի) տեղադրման սենքերի մուտքերի մոտ նախազգուշական լուսային ազդանշանի սարքերը բացակայում են:	• «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի «բ» կետ: • IAEA Safety Standards Series No. SSG-46, Radiation Protection and Safety In Medical Uses Of Ionizing Radiation, p. 3.14:	• Ռենտգենախտորոշման սարքերի տեղադրման սենքերն ապահովել լուսային ազդանշանի սարքերով: • Կոմիտե ներկայացնել նշված խախտման վերացումը հավաստող նյութեր:	20.10.2023թ.
16.	Ընկերության գեներացնող ճառագայթման աղբյուրների պլանային գույքագրման վերաբերյալ հաշվետվությունը	«Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում առկա ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման	• Կոմիտե ներկայացնել գեներացնող ճառագայթման աղբյուրների 2022թ. գույքագրման տվյալները՝ «Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում առկա ռադիոիզոտոպային և գեներացնող	20.11.2023թ.

	կոմիտե չի ներկայացվել:	աղբյուրների հաշվառման վերաբերյալ պահանջներ սահմանելու մասին» կոմիտեի նախագահի 2012թ. մարտի 26-ի № 86-Ն հրաման, կետեր 26,34:	ճառագայթման աղբյուրների հաշվառման վերաբերյալ պահանջներ սահմանելու մասին» կոմիտեի նախագահի 2012թ. մարտի 26-ի № 86-Ն հրամանին համապատասխան: • Ապահովել ամենամյա պլանային գույքագրման վերաբերյալ հաշվետվության ներկայացումը կոմիտե: • Գույքագրման արդյունքների հիման վրա (անհրաժեշտության դեպքում) ներկայացնել հայտ լիցենզիայի պայմաններում ու պահանջներում, գեներացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցամատյանում համապատասխան փոփոխություններ իրականացնելու համար:	
17.	Ընկերության գեներացնող ճառագայթման աղբյուրների պլանային հաշվառման համար պատասխանատու անձ նշանակված չէ:	«Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում առկա ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների հաշվառման վերաբերյալ պահանջներ սահմանելու մասին» կոմիտեի նախագահի 2012թ. մարտի 26-ի № 86-Ն հրաման, կետ 12:	Կոմիտե ներկայացնել գեներացնող ճառագայթման աղբյուրների պլանային հաշվառման համար պատասխանատու անձ նշանակելու հրամանի պատճենը՝ «Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում առկա ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների հաշվառման վերաբերյալ պահանջներ սահմանելու մասին» կոմիտեի նախագահի 2012թ. մարտի 26-ի № 86-Ն հրամանին համապատասխան:	20.10.2023թ.

9. Եզրակացություն

Ընկերությունում կոմիտեի կողմից տրված ՃԱՕ-186-2008 առ 26.08.2008թ. լիցենզիայի պայմանները և պահանջները իրականացվում են բազմաթիվ խախտումներով:

10. Առաջարկվում է

Սույն կարգադրագրի 8-րդ կետում նշված խախտումները և թերությունները վերացնել սահմանված ժամկետներում՝ այդ մասին 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելով կոմիտեին:

Կարգադրագիրը ներկայացրել են՝

Տեսչական խմբի անձնակազմ՝

Է. Ներսիսյան

Ա. Բաբայան

Կարգադրագրի հետ ծանոթացել և մեկ օրինակ ստացել եմ կատարման համար:

«Ռուբիկ Հարությունյանի անվան
Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի
տնօրեն

Վ. Մանուկյան

Digitally signed by MANUKYAN
VARDAN 2704710198
Date: 2023.09.29 14:12:03 AMT

«_____»_____ 2023թ.